

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րոպե, կես տարվան 6 րոպե:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն կամրադատան մէջ:

Օտարալեզուները կրնան են ուղղակի
Դիմել. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(հացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունւում է ամեն լիզրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խորտանյար քաղին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Հասարակական հանկուտ:—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական տեսու-
թիւն: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:
—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Դասիկթ բեկ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ

Թիֆլիսը գտնւոյ է բացառութիւն
է ամբողջ աշխարհիս երեսին: Մի
քաղաք, որ ամբողջ է ոչ թէ
միայն առանց որ և է իրէալ-
ների, որ չունի իր մտաւոր և բա-
րոյական յատկանիշը, իր ուղղու-
թիւնը, իր գոյնը, բայց որ ապ-
րում է առանց որ և է մտաւոր
կեանքի: Մի քաղաք, որ ամ-
բողջապէս ապրում է փոքրիկ և
փոքրի համար, մարդիկ որոնք
ապրում են առանց մտաւոր կե-
անքի, առանց գլխի:

Թիֆլիսը համար փոքր գրե-
լաւոր բանն է, փոքր կեանքի
նպատակն է, իսկ գլուխը, մտա-
ւոր կեանքը, մտաւոր զարգա-
ցումը, որ և է քաղաքիս բնութե-
ան հետքերը ոչ թէ միայն
երկրորդական բան է, բայց բոլ-
րովն էլ չը կայ նրա համար:

Թիֆլիսը մի տեսակ հրէշ
է, մի սլանդակ, տձև, անհաս-
կանալի երևոյթ է, մի տեսակ
կիստօ սատիւ է, որի համար

ամեն բան հանաք է, ամեն բան
դարդակ, աննպատակ, ճանճարի,
աւելորդ, յիմար բան է երևում,
բացի փողից ու փորից: Նրա
համար ոչ թէ միայն ոչինչ տուր
բան չը կայ, բայց և ոչինչ բարձր,
յարգելի բան չը կայ նրա աչ-
քում:

Ի՞նչ է հետաքրքրում թիֆ-
լիսցուն. ուսումնարանը, — ոչ. լը-
րագիրը, — ոչ. թատրոնը, — ոչ. ե-
կեղեցական քարոզը, — ոչ. դասա-
խօսութիւնը, — ոչ. ընթերցարա-
նը, — ոչ. ներքին հասարակական
հարցերը, — ոչ. քաղաքականու-
թիւնը, — ոչ....

Ի՞նչ ազդուեցան է պատկա-
նում թիֆլիսցին. նա ինքն էլ
չը գիտէ: Նա ուսն է, հայն է,
վրացի է, թուրք է, եւրոպացի
է....

Ի՞նչ լեզուով է խօսում թիֆ-
լիսցին: Նա ինքն էլ չը գիտէ.
Նա խօսում է ամբողջ օրը խառն
ամեն տեսակ լեզուներով և ոչ
միայն քիչ թէ շատ օրինաւոր
կերպով չը գիտէ:

Թիֆլիսցին մի հատարակա-
կան հանելուկ է, բայց մի
հանելուկ, որ շատ հեշտ է լուծ-
վում: Դա մտաւորապէս սպառ-
ված, ուղեղով անբարոյականաց-
րած, ապականված մի էակ է:

Ինչ մտաւոր կամ բարոյական

հիմարութիւն կամ ձեռնարկու-
թիւն աշուղտում է թիֆլիսում,
— ոչ միայն:

Հիմեցէք մի լրագիր կամ
ամսագիր, լինի նա ռուսերէն,
հայերէն կամ վրացերէն լեզուով,
— թիֆլիսում նա չի աշուղտ:
Կազմեցէք թատրոնական խումբ,
— թատրոնի գործը փաստեր կու-
նենայ: Բաց արէք մի գրադա-
րան, ընթերցարան, — այդ հիմ-
նարկութիւնները ձեզ անհնարին
կը լինի պահպանել: Կարդացէք
գաղափարաւորութիւն, — ոչ ոք չի
գայ:

Թիֆլիսում բոլոր դպրոցները
վատ են գնում և չեն պահպան-
վում երկար ժամանակ, բացի
կառավարութեան դպրոցներից,
որոնք կառավարութենից նիւ-
թական օժանդակութիւն են սը-
տանում, ընկերութիւնները նոյն-
պէս չեն աշուղտում:

Թիֆլիսը համար փոքր ոչ
թէ միջոց է կեանքի մէջ, այլ
նպատակ, որովհետեւ նրա հետ
կապված են նրա համար երկու
բաւականութիւններ՝ փոքրի կուշտ
լինելը և սեռական յարաբերու-
թիւնները: Այդ երկու բաւակա-
նութենից դուրս թիֆլիսը
համար ոչինչ չը կայ:

Նա գնում է օպերա, որովհե-
տեւ երգիչ դերասանուհիներ
գեղեցիկ է, նա նայում է երգչուհու

վրա ոչ թէ երաժշտութիւնը,
երգեցողութիւնը վայելելու տե-
սակետից, այլ նայում է նրա վրա
միմիայն ինչպէս կնոջ վրա, մարմ-
նի վրա և յոյս ունի հասնել իր
նպատակին....

Նա հետաքրքրւում է բան-
կերով և փարբիկաներով ոչ թէ
այն պատճառով որ նրա համար
թանգ է նպատակ երկրի առե-
տրական և արգիւնագործական
կեանքի զարգացմանը, — այլ մի-
միայն իր անձնական շահերի
տեսակետից:

Նա դառնում է Ներսիսեան
դպրոցի հոգաբարձու ոչ թէ այն
պատճառով, որ հետաքրքրւում
է ազգային լուսաւորութեան գոր-
ծով, այլ նրա համար որ իր դիր-
քի միջոցով կարողանայ տեղա-
ւորել իր անընդունակ և քաղցած
ազգականներին որպէս վարժա-
պետներ դպրոցի մէջ և ինքն էլ
ազատվի նրանց պահելու հոգ-
սից....

Նա ձգտում է դուրսից, ուս-
րավայի անդամ դառնալ, ոչ թէ
թեյադրված լինելով հասարա-
կութեանը անկեղծ ծառայելու,
նրան օգտաւէտ լինելու զգաց-
մունքից, այլ որովհետեւ այն կամ
այն պաշտօնը ձեռք բերելով կա-
րելի է աւելի հեշտութեամբ պա-
րապել պօղիւրներով, աւելի

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Բ.

Բուրբ, որի վրա գտնւում էր մատուռը, ծած-
կված էր ուստաւորների խուռն բաղնիքներով:
Ամբողջ Մըցնէթը այնտեղ էր: Ինչպէս ասում
են՝ ասեղ գցելու տեղ չը կար: Մատուռի կող-
մանված, քայքայված փշտակների վրա վառ-
վում էին հազարաւոր մոմեր, որ նուրբված էին
Ջերմուտանը ձեռքերով: Օղը լցված էր ծխով
խուռնի սրբազան անուշահոտութեամբ:

Բայց ուստաւորների մեծամասնութեանը այն-
քան չէր հետաքրքրում մատուռի սրբավայրը,
որքան այն մրցութիւնները, որ պիտի կատար-
վէին այսօր: Նրանք իրանց կրօնական պարտքը
կատարած էին համարում: մոմեր էին վառել,
խուռն էին ծխել, ամանք մատուռներ էին մոր-
թել, իսկ այժմ կամենում էին զուարճանալ:

Մեծ պարտիի գերդաստանը, իր ուստա-
րած լինելով, անանձնացել էր մատուռից փոքր
ինչ հեռու, դարձրել ընկուղիների հովանիների
ներքոյ: Այստեղ նորաբոյս խոտերի վրա տարած-
ված էին պարսկական նախշուն գորգեր և նրանց
վրա շարված էին փափուկ մութաքաներ, պատած
մետաքսեայ գոյնզգոյն կերպաներով: Մեծ պա-
րտիի տիրուհին, վրաց ճմն մայրը, ծալապատիկ
նստած էր Արչիլ թաւաղի որդու տիկնոջ՝ Մելա-
նիայի հանդէպ, և նստելու խաղաղութեամբ ի-
րանց մէջտեղը դրած, նստել էին խաղում: Նա

վրայից հագած ուներ վարդագոյն մանուշակ-
քաթիւքայ, որի եզերքը զարդարած էին ոսկեթել
ջրհաններով, իսկ տակից հագած ուներ մանիշա-
կագոյն մետաքսեայ դերիսայ: Մէջքի ոսկե քամա-
րը և գլխի պաճուճանքները շողողում էին պէս-
պէս թանգաղին գոհարներով: Ձեռքերի բոլոր
մատները վրա մատանիներ կային: Ինքը տիրու-
հին հասակի առած կին էր, կրկնված, պարար-
տացած մարմնով և կարմիր, ունչ չը արտայայ-
տող երեսով, որի հարթ, անորոշ գծերը նրան
բոլորովին գնտակի ձև էին տալիս:

— Եթէ մի գոյգ չէ չ ունենամ, ես տարած եմ,
ասաց նա ձեռքի գառնը (թաւի) մատների
մէջ շփելով:— Ո՛վ սուրբ մատուռ, դու յաջո-
ղիր, դարձաւ նա դէպի նուրբական աւերակները,
օգնութիւն հայցելով:

Նա գցեց գառը մի գոյգ չէ չ ստացաւ:
— Տեսար, Մելանիայ, ինչպէս շուտ կատար-
վեցաւ իմ ուխտը, բացականչեց նա ծիծաղելով,
— ես տարայ, ես տարայ....

— Շուտ կատարվեցաւ.... կրկնեց Մելանիան
նոյնպէս ծիծաղելով:— Դու տարար....

Մի քանի աղետականների կնիքներ, նոյնպէս
խաչառածաճուղի հագուստներով, բոլորեւ էին նա-
ղու շուրջը և նայում էին խաղին: Նրանք աւե-
րու ուստաւորն, որ վերջապէս տիրուհին տարաւ
Մելանիայից, որ յայտնի էր իր վարպետութեամբ
խաղի մէջ, — ուրախացան գլխաւորապէս այն
պատճառով, որ երբ նա տանուլ էր տալիս, այ-
նուհետեւ նրա հետ խօսել անկարելի էր լինում:

Մի փոքր հեռու նստած էր Թամարի խորթ
մայրը և խօսում էր մի աւելոր պառակտ: Հետ, որ
յարգված էր աղետական կանանց հասարակու-
թեան մէջ ոչ միայն իր ծերութեան պատճառով,
այլ բոլորը համարում էին նրան խիստ բարեպաշտ

և առաքինի կին: Խօսակցութիւնը Թամարի մա-
սին էր:

— Ինձ լսիր, դաւաճ, ասում էր պառակտ:—
Լեանը լաւ տղայ է, սիրուն, չնարբով, ջահիլ,
էլ ինչ է պակաս: Գլխի մազերի համարքով
ճորտեր ունի. նրա ապրանքներ թիւ ու համար
չը կայ: Նա սիրում է թաւարին, ինձ ասել է,
որ սիրում է. ինձ մօր տեղ է ընդունում նա:
Տուր աղջկիդ, ուզում է, տուր, նրանից լաւ փե-
սայ չես գտնի:

— Ո՛վ է պտուղ նրանից լաւը, պատասխա-
նեց խորթ մայրը զայրացած ձայնով, — բայց որ
այդ սատանայի ծնունդը չէ ուզում, ես ինչ պի-
տի անեմ:

— Սատանայի ծնունդը օրն է, չուզելն օրն է,
ինչ ասել է չէ ուզում. աչքը ճան, ուղիւ տուր,
խօսեց պառակտ նոյնպէս զայրացած ձայնով:—
Դու, ինչպէս էլ որ լինի, նրա մօր տեղն ես. նա
ինչ իրաւունք ունի քո կամքին հակառակ կե-
նալու:

— Ասում է կը գնամ ջուրը կընկնեմ, ինձ կը
խեղդեմ ու Լեանին չեմ ուղիւ: Միթէ դու նրա
քնաւորութիւնը չես իմանում, թէ ինչ տեսակ
անդամն է:— Նա գրանից յետոյ ինչ կարող եմ
անել, հարցրեց խորթ մայրը, իրան չուարած ձե-
ւացնելով:

— Ի՞նչ կարող ես անել... կրկնեց պառակտ
գլուխը շարժելով:— շատ բան կարող ես անել:
Շատ աղջիկներ սկըղում ասում են՝ ինձ կը խեղ-
դեմ, կը գնամ ջուրը կընկնեմ... բայց հէնց որ
փեսայի տնից կեցած հագուստը հագնում եմ, ա-
մեն բան մոռանում եմ....

Թամարը այդ միջոցին հասկանալով, որ խօ-
սակցութիւնը իր մասին է, մի քանի իր հասա-
կակից աղջիկների հետ հեռացաւ, ասելով.

— Գնանք, Սալոմէ, դէպի այն կողմը. տես-
նում ես, ինչ լաւ բուսել են այնտեղ խոտերը:
Նա ցոյց տուեց բուսի ստորոտը, որտեղից սկս-
վում էր մի հարթ, կանաչազարդ տարածութիւն,
որ հասնում էր մինչև Կուրի ափը:

Մանկահասակ իշխանագուն աղջիկները, պառ-
կավաղ եղջերուների նման, խուճով սկսեցին
վազել դէպի բուսի ստորոտը: Նրանք ուրախ
էին, որ վերջապէս աղափեցան իրանց մայրերի,
պառաւ տատերի և մօրբոյրերի ձանձրալի ներ-
կայութիւնից և ալիւ կարող էին ազատ շուռչ
քաշել:

Թամարը այսօր, տոնախմբութեան վայելու-
թեան համեմատ, հագել էր իր ամենաթանգաղին
հագուստները: Բազուկները զարդարած էին ոսկեայ
ապարանջաններով, իսկ պարանոցը ոսկով և գոյն-
ըզգոյն յուզաններով հիւսկած մանեակով: Մէջ-
քին կապած ունի իր հանգուցեղ մօր ծանրա-
գին քամարը: Մետաքսեայ, ծիրանեղջյու դե-
րիպի տակից դուրս էին հայում նրա փոքրիկ
ոտիկները, սեղմված կարմիր մաշկների մէջ:
Աղջիկների խումբը ցրեւ եկաւ դաշտերի մէջ,
ծաղիկներ էին որոնում: Թամարը և Սալոմէն
յետ մնացին: Վերջինը Արչիլ թաւաղի որդու
աղջիկն էր:

— Այն հւմ ոչխարներն են այնտեղ արածում,
հարցրեց Սալոմէն, խօսք բաց անելով:

— Ի՞նչ ոչխարներ, պատասխանեց Թամարը,
որպէս թէ ոչինչ չէ նկատում:

— Ձեռ տեսնում, ա՛նա այն հեռաւոր բլուր-
ների վրա, որ ծածկված են մանր թուփերով:—
Այս կողմը մտիկ տուր, տես, այս կողմը, ասաց
Սալոմէն մի ձեռքով բռնելով Թամարի թիկից,
իսկ մյուս ձեռքը պարզելով դէպի ոչխարները:
— Հիմայ տեսնում եմ... պատասխանեց Թա-

զիւրին է հասնել նիւթական հարստահարութեան...

Եւ չը մոռանանք որ մեր նըկարագրված տիպը ոչ թէ միայն անուա, կինսօ, բուրժուա թիֆլիսցի է, ամբողջ թիֆլիսցին, բայց և բարձրագոյն ուսում ստացած, ինտելիգենցիային պատկանող թիֆլիսցին:

Թիֆլիսցին ոտքից մինչև գլուխ անբարոյականացրած մի էակ է, որի համար ոչինչ մտաւոր, բարոյական և հոգեւոր նպատակ չը կայ կեանքի մէջ: Հարստահարի, կողոպտիչի ուսման ինչքան կարող ես, փորձ կշտացրու և քեֆ արա, — ահա թիֆլիսեցու դէմքը:

Թիֆլիսցու կեանքը մի անընդհատ անանական օրգիա է, առանց մի ամենաչին նշոյն անգամ մտաւոր կեանքի:

Բայց ինչպէս, ինչ պատմական տղեղ և դժբաղդ հանգամանքների շնորհով կազմվել է այդ տեսակ այլանդակ, հրեշաւոր արարած, — ահա մի հասարակական հանելուկ:

Եւ ի՞նչ գերբնական ոյժ, ինչ զօրութիւն հարկաւոր է այդ տեսակ անբարոյականացրած, մարդկային ամեն արժանաւորութիւնը կորցրած հասարակութեան մէջ մտաւոր կեանքի նշոյն անգամ ներշնչելու, ո՞վ կը լինի այն հրաշալի, աստուածային ոյժը, որ կը սթափեցնի մի ամբողջ ապականված հասարակութիւն իր սարսափելի, մշտական օրգիայից, և կը գցի նրա մէջ մտաւոր առաջադիմութեան առաջին սերմերը, բարոյական, մտաւոր ձգտումների, հասարա-

կական իդէալների առաջին կայծը...

Ոչ ոք, բացի մի անողորմ ոյժից, ժամանակից, որ հետզհետէ կը հնձի, կը մաքրի մեր ժամանակակից տղականված հասարակութեան երկու երեք սերունդներ, կեանքից գերեզման տեղափոխելով նրանց և սապալեզ բանալով նոր, աւելի թարմ, աւելի ազնիւ սերունդի առջև:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 6 փետրվարի

Նուստոս սարմատեցի Ղուկաս Ղուկասեանց, ճանապարհորդելով դէպի Ռուսաստան իմ առեւտրական գործերով, հանդիպեցայ Բոստով (Գծնի վրա) խանամիր Ռաֆայիլ տանը, որ իմ երկրացի է և որտեղ բացի մեզանից կային սարմատեցիներից շատերը և նոյնպէս այլ քաղաքացի հայեր: Խնջոյքի ժամանակ առաջարկեցինք հաւաքել դրամ յօդուա թիւրքիայի մեր հայ սովատանջ եղբայրների: Գումարվեցաւ 96 ռուբլ, որ և ուղարկուեալ եմ խմբագրութեանը նուիրատուների ցուցակի հետ միասին: Փողը խնդրուեալ եմ հասցնել ըստ պատկանելոյն, իսկ անունները տպագրել «Մշակ» լրագրում:

Ղուկաս Ղուկասեանց 5 ռ., Գասպար Անպետեանց 2 ռ., Գալուստ Անպետեանց 5 ռ., Աւագ Փարսադանով 5 ռ., Եղբայր Զուհանեանց 15 ռ., Ստեփան Աւետի 5 ռ., Խանամիր Ռաֆայիլ 5 ռ., Զարուհի թոնեանց 3 ռ., Գարուստ Ստեփան 2 ռ., Մուրադ Լազարեանց 3 ռ., Գասպար Լազարեանց 3 ռ., Զակար Մաղաքիանց 1 ռ., Բաբայ (Մնացականով) 2 ռ., Կոստայ Կոստեանց 1 ռ., Ստեփանոս Առաքելեանց 3 ռ., Եղբայր Մարգարիտեանց 15 ռ., Մանուկ Սարգսեանց 1 ռ., Մանուկ Սալաթ Պատարեանց 2 ռ., Եղբայր Ստեփանեանց 3 ռ., Առաքել (Մնացով) 3 ռ., Վարդան Զարուհեանով 1 ռ., Աւետիք Բուտադով 1 ռ., Խոջայ Կարապետով 1 ռ., Սարգսիկ Տէր Զարուհեանց 1 ռ., Մեսրոպ Բաբայանեան 1 ռ., Գէորգ Էլիզով 2 ռ., Զարուհի Սալաթեանց 1 ռ.,

Մարտիրոս Զուլինով 1 ռ., Բաբայ Գալիթեանց 3 ռ.: Ընդամենը գումարն է 96 ռ.:

Ղուկաս Ղուկասեանց

ՆԵՐՔԻՆ ՂՈՒՐԵՐ

Մարտի 8-ին թիֆլիսի վանքի մայր-եկեղեցում, ներկայութեամբ սրբազան Գրիգոր եպիսկոպոս Ղափիբեանցի և քաղաքի ամբողջ հայ հոգեւորականութեան շքեղ կերպով կատարվեցաւ հանդուցեալ կայսր Ալեքսանդր Նիկողայեւիչի հոգեհանգիստը: Նկեղեցին լի էր հայ հասարակութեան բազմութեամբ: Ղափիբեանց եպիսկոպոսը մի ճառ ասեց կայսրի մահվան առիթով և յիշեց այդ ճառի մէջ հանդուցեալ թագաւորի իր հպատակներին արած բոլոր բարեբարութիւնները:

Երէկ, մարտի 10-ին, թիֆլիսի զատաստանական պալատում քննվեցաւ Ալեքսանդր Սէլիկովի գործը, որ մեղադրուեալ էր Բէթանովի սպանութեանը մասնակցելու մէջ: Սէլիկովի պաշտպան պ. Սենեքերիմ Արծրունի էր: Պաշտպան արդարացրեց Սէլիկովին և ոչնչացրեց Գանձակի նահանգական դատարանի վճիռը, որով նա դատապարտված էր 12 տարվայ տաժանակիր աշխատանքներին:

Վաղուց արդէն զգացվում էր գերմանական-հայերէն բառարանի անհրաժեշտութիւնը: Այժմ պ. Պօպովիլ խնդրում է մեզ յայտնել, որ շուտով հրատարակվելու է այդ տեսակ բառարանը: Վիեննայում և որ ցանկացողները գրով այդ բառարանին, կարող են դիմել պ. Ն. Մատուրեանցի մագաղինը թիֆլիսում, Գլորցովի փողոցի վրա:

Շնորհակալութեամբ ստացանք գնդապետ Լազարեի ռուսերէն լեզուով տպված «Ռուսեան թիւրքերի փոքր-Ասիայում երկուսը և նրանց ձեռքով և Պօլսի նաւաճելը» վերնագրով փոքրիկ բրոշուրը (Появление османских турокъ въ Малой Азии и завоевание ими Константинополя). Այդ յօդուածը նախ տպվեցաւ «Кавказский Курьер» լրագրի բանասիրական բաժնի մէջ: Թողածք պարտականուեալ է իր մէջ մի քանի հետաքրքիր պատմական տեղեկութիւններ:

ԳԻՐԲԵՆԻՅԱՆ տիկին Հռիփսիմէ Աստուածատուրեանցից ստացանք 68 ռուբլ հետեւեալ նամակով: «Զուլիսար ամսի 30-ին քաղաքի թատերասիրաց խումբը մի ներկայացումն տուեց, որից զուգացած 68 ռուբլ գումար արդիւնք

մայրը դեռ տաք-տաք խօսում էր պառաւի հետ: Որբորդները տակաւին չէին վերադարձել իրանց գումարձարի զբօսանքից:

Եւսմ պարոնը մի բարձրահասակ տղամարդ էր, այն հոյակապ տղամարդերից մէկը, որ սակեղում էր կողմսը, հետեւելով իր լեռների բարձր գագաթներին: Կախկեղ զինու բարերար աղբեցուցիչներից երեսի թրթնած, անհարթ կաշին բոլորովին կարմիր գոյն էր ստացել լուրջի հետ խառնված: Նոյն գոյնը տարածվում էր նրա աւանդների և խորշոմներով պատած, ծալ-ծալ պարանոցի վրա: Աչքերի մէջ արեւի կար, այդ տալիս էր նրան մի առանձին վայրենի բնաւորութիւն, որը մի և նոյն ժամանակ արտաքին տուեալ էր կատարեալ անհոգութիւն: Բոլորովին անձնած երեսի վրա հաստ բեխերը ձգվում էին մինչև ականջները: Բեխերի վրա առանձին ուշադրութիւն էր դարձած. բացի չրթուքի մասնակցութեամբ ծնունդ մաղերից: Գլխին դրած ուշեր բուխարայի սև մորթից փոքրիկ զղակ, որ թեքված էր դէպի աջ ականջի կողմը, Հազել էր վարդագոյն մախմուրից կարված, կարճ քուլաչայ, զարդարած ոսկեթել և եղբորով: Մէջքը դռնաբար էր ոսկի քամարով, որից քարշ էին ընկած առջից արծաթապատ, երկաթ խնջաբը, իսկ կողքից, նոյնպէս արծաթով պատած, կեռթուր: Խաչմաղի ստորագրեալ կերպարից կարված լայն շալկարի ստորին մասերը խրած էին մոխրագոյն կաշուց պատարասած լայնեղբի մէջ, որոնք թիֆլիսի հմուտ խորագները ձեռագործն էին: Մեծ պարոնի սվիտան թէ հագուստի ձեւերով և թէ, դէնքերով չէին զանազանվում նրանից, տարբերութիւնը միայն հագուստների նիւթերի և գոյների մէջն էր, որոնք աչքի էին

յատկացրեց Հայաստանի սովատանջներին: Այս գումարը ուղարկելով խմբագրութեանը կը խնդրեմ հասցնել ուր հարկն է և «Մշակ» միջոցով ստացման մասին տեղեկացնել հասարակութեանը:

Մեզ հաղորդում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՅ, որ փետրվարի 28-ին այդտեղ կատարվեց մի յանդուգն եղեռնագործութիւն: Առաջակները զիշեր ժամանակ մտնում են տէր Սիմէօն քահանայ Աբգարեանի տան բազը, դուռն են կանչում տէր հօրը և երբ նա երևում է դռների մէջ, նրան բռնում են և ոչնչացնելու պէս մղծում են: Յետոյ բնակարանից տանում են նրա բոլոր շարժական կայքերը: Թղթակիցը Ագուլիսի տանուտէրի ուշադրութիւնը դարձնում է այդ տիւրալի անցքի վրա:

Երեք չորս օր Ռուսաստանի փոստը չէր եկել թիֆլիս, կովկասեան սարերի վրա եկած անանցնելի ձիւների պատճառով: Երէկ վերջապէս ստացանք երկու փոստ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անդլիական պարլամենտից ընդունված ստիպողական բիլլի գործադրութիւնը արդէն սկսվեցաւ Իրլանդիայի մէջ: Այդ օրէնքի հիման վրա կայանաւորված են կալուածական միութեան երեք անդամներ և այդ կայանաւորութիւնների լուրը շուտով տարածվեցաւ ամբողջ աշխարհի մէջ: Ուրիշ պետութիւնների մէջ այդպէս չէ լինում: Նրանց մէջ կարող են կայանաւորվել հարկաւոր մարդիկ և այդ մասին ոչ մասնաւոր և ոչ հեռագիրը ոչինչ տեղեկութիւն չեն հաղորդի և այդպիսի իրողութիւնները աննկատելի կը մնան: Շատ երկրներ իսկապէս կարող են նախանձով նայել այն բացառական դրութեան վրա, որի մէջ այժմ գտնվում է Իրլանդիան:

Նորբում հեռագիրը հաղորդեց, որ անգլիական կառավարութիւնը բօնիսերից զինադադար է խնդրել: Այդ առիթով Գլադստօն յայտնեց համայնքների ժողովի մէջ, որ կառավարութիւնը չէ հրամայել անգլիական զօրքերի հրամանատար զներսայ

զարկում իրանց վառ խաչատարեալութեամբ: — Ինչու այսքան ուշացար, հարցրեց մեծ պարոնի տիրուհին, նաուդու խաղատախտակը մի կողմ դնելով, և ուրախ ժպիտը երեսին ոտքի վրա կանգնելով, երբ նրա վեհափառ ամուսինը իր խումբի հետ մօտեցաւ կանանց հասարակութեանը:

— Ինչպէս չուշանայի, պատասխանեց նա որոտածայն խորխորումով: — այդ անպիտան Արչիլը ժամերով պահեց ինձ:

Արչիլը ուրախութիւնից սկսեց ծափ տալ: Բայց տիրուհուն տատանի հետաքրքրում էր, թէ «անպիտան» ինչ առիթով կարող էր ուշացնել իր ամուսնին: Երբ բոլորը նստեցին գորգերի վրա, ինքն էլ բռնելով իր ամուսնի ձեռքից և նստացնելով մութաբայի վրա, հարցրեց.

— Ինչ բանի վրա էր վէճը: Գեռ մեծ պարոնը չը պատասխանած, Արչիլ թաւաղի որդին առաջ բնկաւ:

— Ինչ բանի վրա պիտի լինէր, տիրուհի, ասաց նա, մի առանձին մտապարծեմեամբ կանգնելով կանանց հասարակութեան առջև, — մենք վիճում էինք այն բանի վրա, թէ ով ում որքան պիտի վճարէ, եթէ նրա խոյը յաղթող կը հանդիսանայ:

— Միթէ պիտի կուտայնէք այսօր, հարցրեց տիրուհին ժպտելով: — այդ լաւ է, մենք էլ լաւ թամաշայ կուենանք, դարձաւ նա դէպի միւս իշխոսնուհիները, որոնք բոլորն էլ պատասխանեցին նրա ուրախութեանը նայնպէս ուրախ ժպտներով:

— Պիտի կուտայնենք, պատասխանեց Արչիլ թաւաղի որդին նոյն անպարծեմութեամբ: — Տեսնում եք իմ խոյը, փեղ է, փեղ: Նրա հատը ամբողջ վրաստանում չը կայ:

Բոլոր իշխոսնուհիների աչքերը դարձան դէպի

մարը, աւելի հետաքրքրութեամբ նայելով դէպի հօտը: — բայց շատ հեռու են, դժուար է դիտեալ, թէ ում ոչնչարներն են:

— Ես գիտեմ... ասաց Սալոմէն խորամանկ ժպտով: — ձեր ոչնչարներն են...

— Մեր ոչնչարները այս կողմը չեն բերում:

— Այսօր բերել են...

— Ինչու համար... հարցրեց թամարը և նրա ձայնը զգալի կերպով դողաց:

— Նրա համար որ, դու այստեղ ես... ասաց Սալոմէն այժմ աւելի վճռական կերպով:

Թամարը ոչինչ չը պատասխանեց, գլուխը քարշ գցեց, բայց Սալոմէն սուր նկատողութիւնից անցյալ չը մնաց, որ իր գեղեցիկ ընկերուհու մեծ, սևորակ աչքերը լցվեցան արտասուքով:

— Այն, թամար ջան, քո հոգուն մատաղ, ես ամենին նպատակ չունէի վիրաւորելու քեզ, թամար ջան, ինչու ես լաց լինում, անդադար կրկնում էր նա, իր գրկի մէջ խորտած ունեղով թամարին, որը հեկեկալով ասաց.

— Ամենք ծիծաղում են ինձ վրա... դու էլ ես ծիծաղում, Սալոմէ, ես քեզ իմ աչքի լոյսի պէս սիրում էի... ես քեզանից թագուն ոչինչ չունէի... ես բոլորը պատմեցի քեզ... Ինչ անեմ, Սալոմէ, ես էլ աշխատում եմ մոռանալ, յաւիտեան մոռանալ չնրա ն, բայց որ չեմ կարողանում, էլ ինչ անեմ...

Օրբորդի աչքերը աւելի ևս լցվեցան արտասուքով, և նա երեսը ծածկելով երկու ձեռքով, գլուխը քարշ գցած, նստեց մի քարի վրա, չը կամենալով այլ ևս առաջ գնալ: Սալոմէն ևս նստեց նրա մօտ, աշխատում էր միջիթաղել նրան, սաստիկ փօշմանելով իր անզուշուրթեան վրա, որով աւելացրեց իր սիրելի ընկերոջ

վուզին զինադադար խնդրել բոերներէց, այլ այդ բանը արել է հրամանատարը իր կողմից, որ կառավարութիւնը հաւանում է նրա կատարած այդ գործը և բաժանում է հրամանատարի կարծիքները: Այնուհետև գլխաւորն ասաց, որ նա չէ կարող ներկայացնել պարտաւնական խաղաղութեան պայմանները բոերների հետ, մինչև խաղաղութիւնը չը հաստատվի:

Ձը նայելով, որ զերմանական պետական կանցիլը անդադար անբաւականութիւններ է ունենում Պրուսիայի և Գերմանիայի սահմանադրական հիմնարկութիւնների հետ, չը նայելով, որ այդ անբաւականութիւնների պատճառով լուրեր տարածվեցան, իբր թէ կառավարութիւնը կամենում է արձակել լայնատաքը, այնու ամենայնևս պարզամենտիքնութեանը կը ներկայացնվին կառավարչական օրինադներ բանտերների ապահովութիւնը զգալի պատահարների դէմ պարտաւորեցնել զարմանելու համար: Միացեալ խորհուրդը մարտի 5-ին քննեց այդ օրինադները և վճռեց ներկայացնել լայնատաքին:

Լրագիրները հազորդում են այն հարցի մանրամասնութիւնները, որ Փրանսիական պատգամաւորների ժողովի անդամ Ալեմանսո առաջարկեց կառավարութեանը ցուցաբերելու վառօդ ու գէնքեր ծախելու մասին: Ալեմանսո Գամբետտայի քաղաքական հաւանակորդ է համարվում, բայց նա չունի երկրորդի ընդունակութիւնները, սրամտութիւնը և տաղանդը: Իր հարցը բացատրելու ժամանակ Ալեմանսո անկարող եղաւ հետեւել պարզամենտական սովորութիւններին և պատմեց իր մասնաւոր խօսակցութիւնը պատերազմական միջոցների հետ, որից երևում է, թէ միջնաբերդի յայտնի է եղել, որ զենքը և վառօդը գնվում է Յուլիանտանի համար: Պատերազմական միջոցները ստիպեցաւ հրապարակելու հրաժարվել իր մասնաւոր խօսակցութիւնից: Ֆրանսիական սենատը նորեկումն հաստատեց մի քանի հարկերի կառավարչական օրինադիւնները:

մատուռի աւերակները, որի շուրջը այդ միջոցին պտտեցնում էին թէ Արշիլ թաւաղի որդու խոյը, թէ Լիան թաւաղի որդու չուռը և թէ այն բոլոր անասունները, որ այսօր պիտի մըրցուի թիւն: Պտտող նուիրական սըրբաւարի շուրջը պիտի կատարվէր եօթն անգամ, որպէս զի օրվայ հերոսները ուժ և զօրութիւն ստանային, երբ այդ խորհուրդը վերջացաւ, նրանց տարան առանձին տեղերում պահելու, մինչև հանդէսի սկսվելը: Բայց Ալեքսի և Ջաքարա թաւաղի որդիների կաքաները, իրանց վանդակներով մնացին դրված մատուռի աւերակների վրա: Նրանց մօտ դրված էին և լորիկ վանդակները, որ պատկանում էին մէկը մեծ պարոնի սափրիչի որդուն, իսկ միւսը մեծ պարոնի ժառանգին:

Հեռուից բաւական թամաշա անելուց յետոյ, տիրուհին կրկին դարձաւ դէպի մեծ պարոնը, հարցնելով:

— Ի՞նչով դրադ եկաք Արշիլի հետ: — Եթէ իմ խոյը կը յաղթէ, ես կը ստանամ Արշիլից 500 ծուխ ճորտեր իրանց հողերով, նրա կայտաւորելից որը երբեք չի կրնար իսկ եթէ Արշիլի խոյը յաղթելու լինի, նա կը ստանայ ինձանից 600 ծուխ ճորտեր իրանց հողերով, իմ կալուածներից որը որ ընտրելու լինի, պատասխանեց մեծ պարոնը, աւելացնելով: — Ինչպէս է, լաւ չեմ բարեխել:

— Լաւ էք բարեխել, մէջ մտաւ Արշիլի տիկինը: Միջանաք, — մեծը հարկը ծուխով աւելի կը ստանանք:

— Հա, աւելի կը ստանանք, կրկնեց մեծ պարոնը հեղանակաւ եղանակով: — Ինչ պիտի անէի, ես էլ հարկը ծուխ աւելացրի. քո ջուրը մարդը զանգես տարաւ, ինչ պիտի անէի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ֆրանսիական «Temps» լրագիրը հազորդում է հետեւեալ Գամբետտայի և Գրեվի տեսակցութեան մասին, որ կայացաւ պատգամաւորների ընտրութիւնը ցուցակներով կատարելու հարցի առթիւ: Տեսակցութիւնը, ինչպէս և միշտ, բարեկամական էր: Գրեվի և Գամբետտա չէին վիճաբանում, այլ խօսակցում էին: Ինչպէս երևում է հանրապետութեան նախագահը անպայման ընդդէմ չէ ցուցակներով ընտրութիւնների ձևին: Նրա կարծիքով 1876 և 1877 թուականների պատգամաւորների ժողովի կազմակերպութիւնը առհասարակ լաւ է, բայց նոր ընտրողական ձևի կողմնակիցները այնպէս են դործում, կարծես նրանք կամենում են ազատել այժմեան ժողովից: Այդ պատճառով Գրեվի չէ համակրում ընտրողական նոր ձևին: Նա նկատեց, որ հանրապետական պատգամաւորների այժմեան մեծամասնութիւնը շատ դժուարութիւնների առաջն առաւ և նպատակեց հանրապետութեան հաստատվելուն: Իբրեւ նախագահ Գրեվի ցանկանում է, որ պահպանվի պատգամաւորների ժողովի այժմեան կազմակերպութիւնը: Շուտով Գամբետտա նորից կը տեսնվի Գրեվի հետ:

— «France» լրագիր մէջ տպված է Ժիրարդի յօդուածը, որ խորհուրդ է տալիս պատգամաւոր Բարդուին յետ առնել իր առաջարկութիւնը ընտրողական նոր ձևի մասին, որպէս զի Գրեվի և Գամբետտա անբաւականութիւն չունենան:

— Լօնդօնից հեռագրում են, որ համայնքների ժողովը վերջացրեց իր խնդիրայի մէջ զէնք կրելու հարցի քննութիւնը:

— Գլուքից հեռագրում են, որ ստիպողական օրէնքների հիման վրա փետրվարի 25-ին կալանաւորված են դարձեալ 15 մարդ:

— Լօնդօնից հեռագրում են, որ անգլիական կառավարութիւնը ի նկատի ունենալով, որ արեւելեան գործերը կարող են խնդրել, ցանկանում է շուտով վերջացնել իր հաշիւները բոերների հետ, որոնց առաջարկված են խաղաղական բաւականացուցիչ պայմաններ: Գլուքսթօնի միջնաբերդի հետ մօտ յարաբերութիւններ ունեցող «Daily News» լրագիրը ծաղրում է եւրոպական դիպլոմատիային, որ ստիպված է անչարժ մնալ Բ. Գրան հնարած բանակցութիւնների շուրջին:

— Կ. Պօլսից լրագիրներին հազորդում են, որ մարտի 6-ին նշանակված դեսպանների խորհուրդը յոյն-թիւրքական վէճի պատճառով չը կայացաւ, որովհետեւ թիւրքաց հաւատարմատար Սերիբ-փաշա, հէնց որ խորհուրդը սկսվեցաւ, սուլթանի պալատը կանչվեցաւ:

Մեկնախալի «Վհուր մարդը» դարձեալ սկսեց ծիծաղել և ուրախութիւնից ծափ տալ:

— Իսկ ինձ մեծ պարոնը ոչինչ չաւելացրեց, տիրուհին, կատարովէով խօսակցութեան մէջ մըտաւ Լիան թաւաղի որդին, մի չորուցամաք երկտասարդ, որը իր մէջըր այնքան սեղմել էր արծաթէ քամարով, որ փոքր էր մնում մէջըր կըտրվի:

— Գուր ինչ պիտի կուռացնես, հարցրեց տիրուհին, դառնալով դէպի Լիան թաւաղի որդին, — քեզ ինչու պէտք էր աւելացնել քիչ ունեւ:

— Փառք Աստուծոյ, քիչ չունեմ, բայց դարձեալ ես չեի ցանկանայ յետ մնալ Արշիլից և մի բան աւել չը ստանալ, պատասխանեց երկտասարդը փոքր ինչ վշտացած եղանակով:

— Լաւ, դու ինչ պիտի կուռացնես, կրկնեց տիրուհին իր հարցը:

— Իմ չուրը ձեռ մեծ չան հետ. եթէ իմ յաղթէ, կը ստանայ 300 ծուխ ճորտեր իրանց հողերով, իսկ եթէ ձեռը յաղթէ, կը ստանայ նոյնքան հաւաւատար են: Ես ինչորում էի մեծ պարոնից որ քանի մի 50—100 ոչխար աւելացնէ, բայց նա հակառակի պէս ընդդիմացաւ. չէ ու չէ, ասաց. ճորտեր, որքան կամենաս, կաւելացնեմ, բայց ոչխար, մի հատ էլ չեմ կարող աւելացնել:

— Ի հարկե, ոչխարներ չէր կարելի աւելացնել, պատասխանեց տիրուհին հմուտ տնտեսագէտի եղանակով: — այս տարի առանց դրան էլ մեր իւրն ու պանիրը պակաս է, բայց ճորտեր կարելի էր. ճորտերն ինչ են տալիս մեզ. թող ստակեն նրանք...

Այս միջոցին թամարի խորթ մօր հետ խօսող պառաւը նրա ուշադրութիւնը ծածուկ դարձրեց Լիան թաւաղի որդու վրա:

— Լօնդօնից լրագիրներին հազորդում են, որ մարտի 6-ին կայացած «ազատամիտների միութեան» խորհուրդը վճռեց բողոքել կառավարութեան քաղաքականութեան դէմ Տրանսիլաւի վերաբերութեամբ:

— Լօնդօնից հեռագրում են, որ համայնքների ժողովի մէջ իրանդացիների զէնք կրելու հարցը քննելու ժամանակ ժողովի անդամ Գոնել հեռացվեցաւ ժողովից, որովհետեւ նա անարգեց սպիկներին:

— Կ. Պօլսից լրագիրներին հեռագրում են, թէ թիւրքաց հաւատարմատարները դեսպանների կոնֆերանցային առաջարկեցին հետեւել ըսկզբնական հարցը արեւօք պետութիւնները բացի բարոյականից կարծի են այլ սպահովութիւն տալ, որ ցուցաստանը կընդունի Բ. Գոնից առաջարկված և պետութիւնների հաւանութիւնը ստացած սահմանադրութիւնը: Այդ հարցի վերաբերեալ դեռ ես ոչինչ վճիռ չէ կայացրած:

— «Polit. Corresp.» լրագիրն հազորդում են Կ. Պօլսից, որ թիւրքիւն և Պարսկաստանը համաձայնել են միմեանց հետ սահմանական վեճերի լուծելը և Բիւրդիստանը խաղաղացնելու գործը յանձնել մի խառն մասնաժողովի, որ արդէն կազմված է երեք թիւրք և երկու պարսիկ հաւատարմատարներից: Մասնաժողովին յանձնված է վերջնական սահման որոշել 1,280 կիլոմետր տարածութեան վրա Վանի և Շառ-Էլ-Արաբի մէջ: Բացի այդ մասնաժողովը, մի քանի տեղեկութիւններ հաւաքելուց և հարկաւոր դէպքում քիւրդերի առաջնորդների հետ բանակցելու յետոյ, պարտաւոր է անհաճեալ միջոցներ առաջարկել քիւրդերից կատարվող աւաղակութիւնների և ասպատակութիւնների առաջն առնելու համար: Ի նկատի ունենալով քիւրդերի թշնամական դիտաւորութիւնները հաւատարմատարները հրաման կը ստանան իրանց կառավարութիւնից անյապազ ուղևորվել դէպի սահմանները:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Կ. Պօլսի «Լոյս» լրագիրը քաղում ենք հետեւեալ գուարձախօսութիւնը: «Իմաստուն մարդուն մէկը տուն մը կը շինէր, բայց հիւը վեր դրաւ ու առաստաղը վար, այսինքն չինելուն հակառակ ձևով: Բարեկամները զարմացմամբ հարցուցին անոր թէ ինչու արդէօք այսպէս կը ներէ: — Կարող եւր ուրիշ ունեւ ըսաւ, և հաւանականաբար առած կլինի երբ տունը տակնուվրայ ընէ, այն ատեն տունս կը շտկուի»:

Անգլիական լրագիրները հազորդում են որ

— Տեսնում ես, ինչ չուր ու շորքով տղայ է, դրուստ թամարի խորհն է: — Երկուսն էլ սիրուն, երկուսն էլ աղունակի պէս գեղեցիկ...

— Ի՞նչ անեմ, պատասխանեց խորթ մայրը: — Թո՛ղ քօռանայ թամարը, որ մի այդպիսի լաւ տղին թողած, մի անպիտանի ետեկց է ընկած...

— Պէտք է խրատես, պէտք է նրա աչքը հանես: — Խորհուրդ էր տալիս պառաւը:

Միւս կողմում խօսակցութիւնը այժմ դարձել էր Ջաքարայի և Ալեքի թաւաղի որդիների առաջարկների վրա և ուրիշ երկու աղունականների կաքաների վրա: — Խօսում էին ու ծիծաղում, թէ ո՞վ որքանով է դրադ եկել: մէկը ասում էր, թէ այս ինչի աքաղաղը կը յաղթէ, միւսը այն ինչի կաքան էր ջատագովում: վիճում էին, բարկանում էին, աղաղակում էին, և միմեանց կոշտ-կոպիտ սպառնալիքներ էին կարգում: Բայց միակ ողորմելի արարածները, — որ այդ տար վիճարանութիւնների մէջ ձայն չունէին, որոնք դրադ ու չնեղի մըցութեան առաջնակներ էին դարձել, — էին ճ ու ռ ու ի ը, որ այժմ հեռուից գուարձութեամբ նայում էին իրանց իշխանների վրա, և անհամբերութեամբ սպասում էին, թէ երբ կը սկսվի հանդէսը, թէ երբ այդ շարագուշակ հանդէսը վճռելու էր նրանց ամեն մէկի վիճակը և մի բռնաւորի ձեռքից միւս բռնաւորի ձեռքն էր ցցելու:

— Լաւ, լաւ, բաւական է, ինչու էք վիճում, հանգստացրեց բոլորին մեծ պարոնի տիրուհին, — չուտով կը տեսնենք, թէ որը կը յաղթէ: Հիմիկուանից ինչու էք միմեանց բողաղը ծածում...

Այս միջոցում դրան սափրիչի որդու հետ, մատուռի կողմից, յայտնվեցաւ մեծ պարոնի

Մէն կղզու վրա, որտեղ չուտով կղզու օրէնագրական ժողովի համար ընտրութիւններ տեղի կունենան, առաջին անգամ կը մասնակցեն ընտրութիւններին և կանայք: Ընտրողական իրաւունքը արված է բոլոր կանանց, որոնք սեփականատէր են և որոնց կալուածքը բերում է տարեկան ոչ պակաս քան 1 ֆունտ ստէրլինգ արդիւնք: Այդպիսով ընտրողական ցուցակը կաւելանայ 500 անուններով:

Լրագիրները հազորդում են որ մի ամերիկուհի օրիորդ էղվին, որ երկու տարի է արդէն ճանապարհորդում է Եւրօպայում կանանց դրութիւնը ուսումնասիրելու համար, չուտով գալու է Ս. Պետերբուրգ, որպէս զի ուսումնասիրէ և ուսն կանանց դրութիւնը: Մի և նոյն ժամանակ օրիորդը Ս. Պետերբուրգում հրապարակական դասախօսութիւններ կը կարդայ կանանց դրութեան և իրաւունքի մասին: Գաղափարութիւնները կը լինեն ֆրանսերէն լեզուով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԲՆԱԿԵՐՈՒԹԵՒՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի: Ի Տէր Հանգուցեալ Կայսրի թաղումը կը լինի մարտի 15-ին: Թագաւորին սպանող մեռած չարագործը փախստական յանցաւոր է Տիւտչեկ աղանուսով: Որեւորեա կուղևորվին. Շուվայով՝ Վիեննա և Հոսմ, Սուվորով՝ Բերլին, իշխան Վարանցով՝ Լոնդոն և կը տանեն Կայսրի սեփական ձեռքով գրված նամակները օտար թագաւորներին: Չարագործները շարունակ կալանաւորվում են: Գտնված են շատ զինամիտ և դրամ: Մօսկվայի վճռեց արձան կառուցանել Հանգուցեալ Թագաւորին Կրեմլի մէջ, պալատի հանդէպ: Կրա համար յատկացրած է և հաւաքված է 140,000 ռուբլ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 47 կ., երկրորդ 92 ռ., 75 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ., ներքին 5% տոմսը փոխառութեան տոմսակը արժէ 221 ռ. 50 կ., երկրորդ 214 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 62 կ., երկրորդ 91 ռ. 62 կ., երրորդ 91 ռ. 75 կ., ոսկի 7 ռ. 97 կ.: Խուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,62 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 210 մարկ 50 պֆ., Գարիցի վրա 261 ֆրանկ 25 ստնիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

մանկահասակ ժառանգը: Ես մի երիտասարդ էր մօտ քսան և հինգ տարեկան, այն թիթեամիտ երիտասարդներից մէկը, որ աճում, բարձրանում էր, միշտ տղայ մնալով: Մայրը նրան տեսնելով, վեր թաւա իր նստած տեղից, և զրկելով որդուն, հարցրեց.

— Ջաւակ, դու ինչ պիտի կուռացնես: — Իմ լուրը, դրա լուրի հետ, նա ցոյց տուեց սափրիչի որդու վրա: — Իմը կը յաղթէ, անպատճառ կը յաղթէ, մայրիկի տես, վանդակը այնտեղ եմ դրել, մատուռի սեղանի վրա: Տէրտէրին էլ տեսի, որ մի բան կարգայ: Անպատճառ կը յաղթէ: Մի տմիկ աւել է, որ նրան քիչով եմ ուսուցնում ես:

— Գուք ինչով դրադ եկաք, հարցրեց մայրը, որին մեծ ուրախութիւն էր պատճառում որդու դուարձութիւնը:

Փոխանակ որդուն, պատասխանեց հայրը: — Եթէ սափրիչի որդու լուրը յաղթելու լինի, ես խոստացել եմ նրան թաւաղութիւն տալ, իսկ եթէ իմ որդու լուրը յաղթելու լինի, չեմ իմանում, թէ ինչ պիտի ստանայ սափրիչի որդուց:

— Ի՞նչ պիտի ստանամ, ասաց ժառանգը ծիծաղելով: — Նա ինչ ունի որ ես մի բան ստանամ: Այս էլ բաւական է, որ իմ լուրը կը յաղթէ, ես ոչինչ չեմ ուզում:

Մանկահասակ ժառանգի մեծահոգութիւնը զարմացրեց բոլորին: — Դժանդ, զօջանդ... ձայն տուեցին ամեն կողմից և սկսեցին ծափահարել:

(Կը շարունակուի)

